

Նամակ խմբագրութեան

ԲՍԲԶՐԱՊԱՏԻ ԷԱՅՐ ԽՐԲԱԳԻՐ.

Համակրելի «ԱՐԱՐԱՏ» ամսագրի Յուլիս-Օգոստոս համարում քահանաների ուշադրութիւնն էք հրաւիրում Հայր Սմբատ քահանայի գիւղական քահանայութեան նուիրած յօդուածների շարքի վերայ և խնդրում էք քահանաների դիտողութիւնները այդ մասին: Ես որպէս գիւղացի և քահանայ, հիմնուելով իմ փորձառութեան վերայ պարտք համարեցի երկտողովս յայտնել իմ կարծիքը այդ մասին:

Գիւղական քահանաների տնտեսական նեղ, աննախանձելի դրութիւնը, արդիւնքների անորոշութիւնը և խիստ կրճատուիլը, ժողովրդի գէպի եկեղեցին և քահանաները ունեցած հաւատն ու յարգանքի նուազելը և առհասարակ քահանաների վատթար կացութեան նկարագրութիւնը, որ անում է Հայր Սմբատ քահանան, շատ իրաւացի են և ուղիղ, նոյն կերպ է Ախալքալակի հայաշատ գաւառում գիւղական քահանաների վերաբերութեամբ:

Թէ ինչ պատճառներից է առաջացել այս դրութիւնը, որոշ չափով պարզաբանում է տրժանագրատիւ Հայրը, բայց կան էլի գլխաւոր պատճառներ, որոնց մասին կուզէի երկու խօսք ասել. գիւղական ժողովրդի մէջ հին քրիստոնէական կրօնական զգացմունքներն ու համոզմունքները տեղ-տեղ սաստիկ թուլացել են, հաւատը գէպի եկեղեցին իսկական բարոյական նշանակութեամբ վերանալու մօտ է, այս մեր անձնական կարծիքն է. ժողովրդը նշանակութիւն է տալիս գլխաւորապէս ձևական արտաքին կողմերին, այս դրութիւնը ստեղծուելուն նպաստել են մի կողմից յեղափոխական զանազան հոսանքներ, բայց մանաւանդ տգէտ քահանաները, որոնց թիւը վերջին տարիներումս շատ բազմացաւ, այս վերջին հանգամանքը՝ քահանաների տգիտութիւնը և բազմաճառութիւնը շատ նպաստեցին քահանայական արդիւնքների կրճատուելուն գիւղերում. յան-

կարծ տեսնում ես 20—30 տուն ունեցող գիւղի վրայ
 ձեռնադրում են մի քահանայ, նա, իհարկէ, այդքան ծխով
 չի կարող ապրել և ընկնում է գիւղից գիւղ առաջարկում
 գիւղացոց իւր քահանայական ծառայութիւնը էժան, նոյն
 իսկ ձրի. գիւղացիին ուրախութեամբ համաձայնում է և
 ահա առաջ է գալիս գիւղում տեղական քահանայի և ժո-
 զովրդի մէջ կռիւ, դաւմադալ և միշտ վերջանում է քա-
 հանայի կատարեալ պարտութեամբ. այս հանգամանքի վե-
 րայ հոգեւոր իշխանութիւնը շատ անգամ չի կարողանում
 իւր ուշադրութիւնը դարձնել և քահանան ստիպուած
 էժանացնում է էլլաւելի իւր ծիսակատարութեան, առանց
 այն էլ չնչին արդիւնքը կամ թէ չէ, ինքն էլ իւր հարեան
 քահանայից վրէժ առնելու գիտաւորութեամբ, գնում է
 նրա գիւղը և նոյն կերպ վարւում, և այսպէս շարունակ
 քահանաները միմեանց վնասում են: Գիւղացին քահա-
 նային համարում է իւր թշնամին և ինչ որ տալիս է, հաշ-
 ւում է ողորմութիւն. ո՞վ է հաշուի առնողը թէ քահա-
 նան ամեն րոպէ անձը վտանգի ենթարկած, պարտական
 է կանգնելու ամեն մի վարակի հիւանդի մօտ, նրան հա-
 ղորդելու, յոյս ներշնչելու, կամ ձմեռը սառնամանիքնե-
 րին, ձիւնի մէջ խրուելով, մի վերստ-վերստ ու կէս շարու-
 նակ գլուխը բաց ննջեցեալ է տանում հանգստարան. դար-
 ձեալ քահանան վատ է, սէրտք է ստանայ 20 կոպէկ
 թաղմանը այն էլ չեն տալիս և քահանան ոչ մի հնարա-
 ւորութիւն չունի ստանալու... Քահանան որովհետեւ տըն-
 տեսական հաշիւներով կապուած է գիւղի հետ, ոչ մի թէ-
 կուղ ամենաօգտաւէտ ձեռնարկութիւն չի կարող առաջ
 տանել կամ յաջողեցնել գիւղում. մի դպրոցաւարտ քահա-
 նայ զոհողութիւն յանձն առած երեք տարի շարունակ
 աշխատեց գիւղում ծխական դպրոց բանալ, խոստանում
 էր գիւղացոց ծախսի կէսը դանազան ընկերութիւնների
 գիմումներ անելով լրացնել, այնուամենայնիւ գիւղացիք
 չհամաձայնեցին և մերժեցին ուսումնարան բանալու առա-
 ջարկը. ասում էին, ամենք վարժատուն չենք ուզէ, թող
 մեր տղաքը կարգալ շտրվեն, միայն թէ մեր տէրտէրը

վարժապետ չգառնայ, փող չաշխատի», չնայած որ քահանան երբեք դիտաւորութիւն չունէր ուսուցչութիւն անելու և այդ ասում էր ժողովրդին:

Վերջին ժամանակներս մի հանգամանք ևս աւելանում է էլ աւելի դժբախտացնելու գիւղական քահանաների տնտեսական դրութիւնը Ախալքալակի գաւառում, այս երկրորդ տարին է, ինչ կառավարութեան կողմից հողաչափ կոմիսեա է շրջում գիւղերը և ամեն տեղ ժողովրդին յայտնում, որ հ գեորականները և նրանց որդիքը ոչ մի իրաւունք չունին հող ունենալու, ժողովուրդն էլ այսպիսի բան է սրտնում, էլ աւելի շուտ քահանայի հախից գալու և խլում են հոգեորականի, քահանայի պապենական հողը: Ինչպէս յայտնի է գիւղական քահանաները առհասարակ լինում են տեղացիներ, հէնց գիւղի միջից, որոնք ինչպէս իրանց հարեանը, ունեն սեպհական հող, որով ապրել են մինչև քահանայ ձեռնադրուիլը և յետոյ էլ աւանց այդ հողի մի բոլէ չեն կարող ապրել սոսկ քահանայական արդիւնքով. և սակայն այս գալիս է վերջնականապէս զրկելու գիւղական քահանային ապրելու հնարաւորութիւնից: Թէ ո՞րքան ուղիղ է այդ կոմիսիայի յայտնածը հոգեորականի հողից զրկուելու մասին, մեզ յայտնի չէ որոշ, միայն գաւառումս արդէն իրողութիւն է, որ տեղ-տեղ հողը քահանայի ձեռքից խլել են: Ինձ յայտնի չէ, թէ ինչ դրութեան է ընդհանրապէս գիւղական հայ քահանաների հողային դրութիւնը Կովկասում, միայն մեր գաւառի իրողութիւնը յայտնելով, համարձակում եմ բարձր հոգեոր իշխանութիւնների ուշադրութիւնը հրաւիրել այս արդի ամենակենսական խնդրի վերայ, մանաւանդ քահանաների որդկերանց դրութիւնը խղճալի է: Այդ կարգադրութեամբ, ինչպէս ասացի, զրկում են հողից և քահանաների որդիքը. այժմ գաւառումս շատ կան այդպիսի ընտանիքներ, որ իրանք հողագործ են, հայրը քահանան իրանց դժբախտութեան պատճառը արդէն վաղուց մեռած և այժմ իրանք զրկում են սեպհական մշակած հողից, որով միայն ապրում էին: Ի՞նչ անեն անգրա-

գէտ մարդիկ, ուրիշ գործ չեն կարող անել, ո՞ր ջուրը
ընկնեն....

ՅԱՐԱՐՔԻՆ ԲԱՏԱՆԱՅ ԱՂՃԱՌԵԱՆ

10-ն հոկտեմբերի 1908 ամի

ի Չամդուրա.

Յ. Գ.

Բարձրապատիւ Հայր խմբագիր, այսօր, թեմիս սըր-
բազան առաջնորդի թոյլտուութեամբ, կայացաւ Ախալքա-
լակ գաւառի հայ հոգևորականների ժողովը, խորհրդակ-
ցելու իրանց հոգային անորոշ և տարտամ գրութեան
մասին և որոշուեց խնդրամատոյց լինել հոգևոր իշխանու-
թեան միջոցով մարմնաւոր իշխանութեանը և խնդրել օրի-
նական ճանապարհով թողնելու հոգևորականների հոգերը
իրանց ձեռին: Ընտրուեց երկու լիազօր այս գործի մասին
առհասարակ հոգ տանելու....

Յ. Բ. Ա.

«ԱՐԱՐԱՏ» Ամսագրի Արգոյ խմբագրութեան

Բազուայ Բալխանի կոչուած արուտրձանի ծխատէր
Մերսարոպ ա. քահանայ Տէր Ոսկանեանցն, չը բաւականա-
նալով տարիների ընթացքում իւր կատարած բազմաթիւ և
բազմատեսակ զեղծումներով և գայթակղեցուցիչ արարք-
ներով, վերջերումս մի տետրակ է հրատարակել իւր անու-
նով, յի երևակայական առասպելներով, անհիմն զրպար-
տութիւններով և ծանր մեղադրանքներով՝ բարդուած Ս.
Սինօդի, Շամախու Կոնսիստորիայի անդամոց, թեմական
առաջնորդների, հոգևոր պաշտօնեաների և մեր Բազուի
միաբանակից եղբարց վերայ:

Ինքը Տէր Ոսկանեանց քահանան անգրագէտ և եր-
կու խօսք իրար հետ անսխալ կապակցել չէ կարող, և

իհարկէ, մի ուրիշ ճարպիկ մարդու է գրել տուել այնքան մեծ պարտաւագիրը, որ դեռ ևս կոչւում է ձկն մանուշակ եւ եթէ նա բաւական ծախք անելով անշուշտ գրել է տուել և տպել է տուել յիշեալ գրքոյքը՝ այդ չի եղել առանց նպատակի։ Ուրիշ նպատակներն իրան է յայտնի, բայց տետրակից երեւցող միտքն այս է, որ նա կամեցել է մի կողմից արատաւորել մեր հոգևոր վարչութիւնները, անպատուել բաղձաթիւ բարձրաստիճան և պաշտօնատէր անձանց անտեղեակ ժողովրդականաց աչքում։ Իսկ միւս կողմից արդարացնելու իւր անձը դատապարտութեան հանդէպ և անմեղ նահատակ ներկայանալու, մի երախտաւոր զօհ, որին ամենքն էլ ամեն տեղ հալածում են միմիայն արդարասիրութեան և ճշմարտասիրութեան պատճառով, որպիսի դիմակով նա տարիներ ընթացքում կարողանում էր շահագործել հանգուցեալ հայրապետի բարեսրտութիւնը։

Թող չըդատապարտեն մեղ նոքա, որ յիշեալ տետրակը կարդալու համբերութիւն ենք ունեցել, որ չենք պատասխանում նորա ամեղցիեղ առարկութիւններին, ըստ որում անպատշաճ ենք համարում որեւէ բանալուսի մէջ մտնել։ Տէր Ոսկանեանց քահանայի հետ և ամեն տեսակ քննադատութիւնից ոտոր ենք համարում յիշեալ հայհոյագիրը։

Սակայն մենք բոլորովին առանց ուշադրութեան չենք թողել արւած ամբաստանութիւնները և դիմել ենք ուր հարկն է, որ խիստ և անաչառ քննութիւնը պարզ է իւրաքանչիւր մէկի յանցանքի աստիճանը հասարակութեան համար։

Բագուի նայ Բահանայուրիւն

Ի 6 ն Դեկտ.

4908 ամի Բաղու.